ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 119 – Ա 12 ապրիլի 2019 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 6-Ի N 8 – Ա ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի և «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի և 19-րդ հոդվածի դրույթներով

կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2013 թվականի մարտի 6-ի «Քաղաքացիական պաշտպանության մարզային ծառայությունների պետեր նշանակելու և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2010 թվականի մայիսի 17-ի N 38 – Ա կարգադրությունն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 8–Ա կարգադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) կարգադրության 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«1. Քաղաքացիական պաշտպանության մարզային ծառայությունների պետեր նշանակել՝

Մուշեղյան Յուրա	- նյութատեխնիկական մատակարարման ծառայության պետ, մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ
Զոհրաբյան Արմեն	- ինժեներական ծառայության պետ, մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ
Համբարձումյան Համբարձում	- բույսերի և կենդանիների պաշտպանության ծառայության պետ, մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ
Վարդանյան Լուսինե	- բժշկական ծառայության պետ, մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի պաշտոնակատար

Սարգսյան Նելսոն - առևտրի և սննդի ծառայության պետ, մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ- տնտեսական զարգացման վարչության պետի տեղակալ

Գալոյան Մամիկոն - կապի ծառայության պետ, մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի վարիչ

Սուչյան Խաժակ - բնակչության հատուկ սպասարկումների ծառայության պետ, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժնի վարիչ

Խաչատրյան Գևորգ - տրանսպորտային ծառայության պետ, մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժն վարիչ

Բիձյան Հակոբջան - կոմունալ տեխնիկական ծառայության պետ, մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության բնակարանային և ենթակառուցվածքների գործունեության բաժնի վարիչ

Ղազարյան Արամ - հասարակական կարգի պահպանման ծառայության պետ, ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության պետ /համաձայնությամբ/

Մարգարյան Վաղինակ - էներգետիկայի ծառայության պետ, «Հայ ԷՑ» փակ բաժնետիրական ընկերության «Գեղամա» մասնաճյուղի Գավառի էլցանցի պետ /համաձայնությամբ/»:

2) կարգադրության 3.1-րդ կետի «մարզպետի տեղակալ Անուշավան Ղազարյանին» բառերը փոխարինել «մարզպետի խորհրդական Անուշավան Ղազարյանին» բառերով:

12.04.2019

ՄԱՐԶՊԵՏ՝ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

HOVHANNISYAN GNEL 1710830069

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ
Գավառ